



Բ. Կիրակի Յայտնութենէն Ետք (Ճաշոց էջ 40)



ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Խօսք, եւ անմահ՝ Եութիւն, որ յանձն առիր մարմնանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուածածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչուեցար, Քրիստոսն Աստուած եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Հօր եւ Հոգւոյն հետ փրկե՛ մեզ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱԿ.

Աստուած թագաւորեց հեթանոսներու վրայ եւ լուսազարդելով պայծառացուց սուրբ եկեղեցին: Ժողովուրդներ, Քրիստոսը բարեբանեցէք:

Տերը զօրութիւն հազաւ, քանի որ մահուան խայթոցը ջնջեց իր սուրբ Խաչով: Ժողովուրդներ, Քրիստոսը բարեբանեցէք:

Յարութիւն առաւ Աստուած եւ ամբողջ տիեզերքը դարձաւ ու սորոգուեցաւ: Մանուկները հաղորդուեցան Կենարարին մարմնին եւ արեան: Ժողովուրդներ, Քրիստոսը բարեբանեցէք:

ՄԵՍԵՂԻ (Սղմ. 64, 2 եւ 3)

Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը վայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանան:

Աղօթքներս լսէ՛ եւ ամեն մարմնաւոր եակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:


ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅՈՐՀՈՐ ՀԱՄԱՑԱՅԵԱԼՆԵՐՈՒՆ

Պօղոս Առաքեալին Տիմոթէոսին ուղղած առաջին թուղթէն Է ընթերցուածը.
(1. Տիմ. 4, 12-5, 16)

Թո՛ղ ոչ ոք համարձակի արհամարհել քու երիտասարդութիւնդ: Ընդհակառակը, ինքզինքդ ցոյց տուր իբրեւ օրինակ հաւատացեալներուն՝ խօսքով, վարքով, սիրով, հաւատքով եւ սրբութեամբ: Սպասելով ժամանումիս, պարապէ՛ ընթերցումներով, յորդորներով, վարարդապետութեամբ: Մի՛ անտեսեր հոգեւոր պարգեւը, որ մէջդ է եւ տրուեցաւ քեզի մարգարէութեամբ եւ երիցութեան ձեռնադրութեամբ: Խորհրդածէ՛ ասոր վրայ եւ յարատեւէ՛, որպէսզի յառաջդիմութիւնդ յայտնի ըլլայ ամենուն: Չգո՛յ՛ջ եղիր քու անձիդ եւ քու ուսուցումիդ եւ շարունակէ՛ նոյն ընթացքով: Այսպէս գործելով պիտի փրկես քու անձդ եւ քու ունկնդիրներդ:

Ծերը մի՛ յանդիմաներ, ընդհակառակը խրատէ՛ զինք հօր մը պէս, երիտասարդները՝ եղբայրներու նման, ծեր կիները՝ մայրերու պէս, երիտասարդ կիները՝ քոյրերու պէս ամենայն սրբութեամբ:

Պատուէ՛ այրիները, անոնք, որոնք ճշմարիտ այրիներ են: Եթէ այրի մը գաւակներ ունի կամ թռռնիկներ, հարկ է սորվեցնել անոնց, որ նախ բարիք ընեն իրենց ընտանիքներուն եւ փոխարէնը հատուցանեն իրենց ծնողներուն: Ասկա հաճելի է Աստուծոյ: Իսկ ճշմարիտ այրին, ան որ բոլորովին առանձին է, թող ինքզինք յանձնէ Աստուծոյ եւ գիշեր ցերեկ աղօթքներ եւ պաղատանքներ ուղղէ Աստուծոյ: Իսկ այն այրին, որ հաճոյքի մասին կը մտածէ, թէպէտ կ'ապրի, սակայն մե-



ռած է: Այս ալ յիշեցո՛ւր անոնց, որպէսզի անբասիր մնան: Եթէ մէկը իրեններուն եւ մանաւանդ իր ընտանիքին հոգ չի տանիր, այնպիսին հաւատքը ուրացած է եւ աւելի չար է քան անհաւատը: Այրիներու խումբին մէջ արձանագրուած այրին պէտք է գոնէ վաթսուն տարեկան ըլլայ եւ մէկ անգամ ամուսնացած: Պետք է նաեւ ունենայ բարի գործերու վկայութիւն. եթէ գաւակները դաստիարակած է, եթէ հիւրընկալութիւն տուած է, եթէ սուրբերուն ոտքերը լուացած է, եթէ տառապեալներուն օգնած է կամ ամեն տեսակ բարի գործեր ըրած է: Երիտա-

սարդ այրիները հեռացու՛ր, որովհետեւ երբ յորի ցանկութիւնները զանոնք կը հեռացնեն Քրիստոսէն, կ'ուզեն ամուսնանալ եւ դատապարտելի են, որովհետեւ արհամարհեցին առաջին հաւատքը:

Միանգամայն անգործութեան կը վարժուին՝ շրջելով տունէ տուն. ո՛չ միայն դատարկապորտ են, այլ եւ նաեւ փասքուս եւ հետաքրքիր եւ կը խօսին բաներ, զորս պետք չէ խօսելին: Կ'ուզեմ

որ երիտասարդ այրիները ամուսնանան, զաւակներ ունենան, իրենց տուները կառավարեն եւ առիթ չտան հակառակորդին զիրենք մեղադրելու: Ոմանք արդէն մոլորեցան սատանային հետեւելով: Եթէ հաւատացեալ կին մը այրիներ ունի իր ազգականներուն մէջ, թող օգնէ անոնց, որպէսզի բեռը Եկեղեցւոյ վրայ չմնայ եւ Եկեղեցին կարենայ օժանդակել ճշմարիտ այրիներուն:

Ալելուիա, Ալելուիա,

Տիրոջ օրհնութեան նորանոր երգեր յօրինեցէք, որովհետեւ բարի է ան, իրեն՝ օրհնութեան սաղմոսներ երգեցէք:


(Սղմ. 32, 2)

Ալելուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ

ՍԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ (Յովհ. 3, 13-21)

Ո՛չ ոք երկինք ելաւ, այլ միայն Ան, որ իջաւ երկինքէն. Սարդու Որդին, որ երկինքն է: Ինչպէս Մովսէս օձը բարձրացուց անապատին մէջ, այնպէս պետք է բարձրանայ Սարդու Որդին, որպէսզի ամեն մարդ, որ հաւատայ անոր, ընդունի յաւիտենական կեանքը: Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ամեն մարդ որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ՝ ընդունի յաւիտենական կեանքը: Որովհետեւ Աստուած՝ իր Որդին չղրկեց աշխարհ, որպէսզի աշխարհը դատէ, այլ, որպէսզի անով փրկուի աշխարհը: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ո՛վ որ չի՝ հաւատար՝ արդէն իսկ դատապարտուած է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ Միածին Որդիի Անունին: Եւ այս է դատաստանը. լոյսը եկաւ աշխարհ, իսկ մարդիկ անելի սիրեցին խաւարը, քան՝ լոյսը, որովհետեւ չար էին իրենց գործերը: Ով որ չարը կը գործէ, կ'ատէ լոյսը, կը խուսափի լոյսէն, որպէսզի չյայտնուին իր գործերը: Իսկ ով որ ճշմարտութիւնը կը գործէ՝ լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ, թէ իր գործերը Աստուծմով եղած են:




ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

Բ.Կիրակի գկնի ութօրեից Յայտնութեան

Պօղոս առաքեալ իր Տիմոթէոս աշակերտին կը թելադրէ եւ կը յորդորէ հետեւեալը. «Ինքզինքդ ցոյց տուր իբրեւ օրինակ»: Ի՞նչ կը նշանակէ Պօղոս առաքեալին այս յորդորը: Առաքեալին համաձայն, օրինակելի ըլլալ կը նշանակէ ուշադրութիւն դարձնել խօսքին, այսինքն թէ ի՞նչ կը խօսինք, ի՞նչ կը խրատենք կամ ի՞նչ կը սորվեցնենք: Նոյնպէս օրինակելի ըլլալ վարքով, այսինքն՝ մաքուր եւ անբասիր: Օրինակելի ըլլալ սիրով, այսինքն՝ սիրել գԱստուած, եւ սիրել մերձաւորը: Օրինակելի՝ հաւատքով, այսինքն՝ ըլլալ նոր արարածներ, նոր պտուղներ տալ կեանքի մէջ: Ի վերջոյ սրբութեամբ, այսինքն՝ Աստուածապաշտութեամբ:

Յովհաննու Աւետարանին հատուածը, շարունակութիւնն է այն մտերիմ խօսակցութեան, զոր Յիսուս գիշերանց ունեցաւ Նիկողէմոսին հետ: Յոգեւոր վերածնունդն էր նիւթը. «Ոչ ոք եթէ վերստին չծնի չի կրնար տեսնել Աստուծոյ Արքայութիւնը»: Յիսուս կ'անցնի նոր յայտնութեան մը, եւ կը խօսի այն ինչ որ Երկնաւոր Յօր քով տեսած էր. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, ով Նիկողէմոս, մենք կը խօսինք ինչ որ գիտենք, կը վկայենք ինչ որ տեսանք: Որովհետեւ, ոչ ոք երկինք ելաւ, այլ միայն Ան որ իջաւ Երկինքէն, Մարդու Որդին, որ երկինքն է»:

Սոյն հատուածին մէջ, Յիսուս կը համառօտէ իր մարդեղութեան եւ փրկչագործութեան խորհուրդը հետեւեալ բառերով. «Աստուած այնքան սիրեց աշխարհը որ մինչեւ իսկ իր Միածին Որդին ղրկեց, որպէսզի ամէն մարդ որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը»:



Յիսուսի մարդեղութենէն առաջ, մարդկութիւնն ամբողջ ստրուկ դարձած էր մեղքի եւ սատանային: Աստուած տեսնելով մարդկութեան այս տխուր եւ ողբալի վիճակը, անսահման գուրթ մղուած, երկինքէն իր ամենասիրելի Որդին ղրկեց: Ան՝ աշխարհ եկաւ ոչ թէ դատելու եւ զայն դատապարտելու, այլ փրկելու համար:

Այսօրուայ ավետարանը կը մղէ մեզ հաւատալու Քրիստոսի միջնորդութեան, Աստուծոյ ձրի պարգեւին, որովհետեւ Իրմէ կախում ունի մարդուն յաւիտենական կեանքը կամ կորուստը: Հետեւաբար, բանանք մեր սիրտը հաւատքի աղբիւրին, եւ նայինք խաչեալին, այնպէս ինչպէս հրեաները անապատին մէջ կը նայէին պղինձէ օձին, եւ պիտի տեսնենք թէ Յիսուս ինչպէս մեզ պիտի լուսաւորէ եւ նոր կեանք պիտի պարգեւէ եւ մեր գործերը պիտի կերպարանափոխուին, եւ պիտի դառնան Աստուծոյ գործերը:

Որքան ուրեմն փոյթեռանդն ըլլալու ենք բարի գործեր կատարելու մէջ, որովհետեւ բարի գործը Արքայութեան դռները կը բանայ մեր առջեւ:

Ամէն: